Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին առընթեր

երիտասարդական խորհրդի անդամի մրցույթի հայտարարություն

Այնթապ համայնքի ավագանին հայտարարում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի մրցույթ:

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) խորհրդակցական մարմին է, որի գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և խորհրդի կանոնադրությանը համապատասխան:

Խորհրդի ոչ պետական հատվածի համար հայտ ներկայացնելու կանոնադրական չափանիշներն են՝

1. Տարիքը՝ 16-30 տարեկան.

2. Երտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական, և մշակութային խնդիրներին տիրապետելը:

3. Երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձ:

4. Երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն:

Խորհրդի կազմում ընտրությունը կատարվում է մրցութային կարգով:

Հավասար պայմանների դեպքում որպես առավելություն են դիտվում երիտասարդական քաղաքականության բնագավառում իրականացված փորձագիտական աշխատանքները կամ հրապարակումները, ոչ ֆորմալ կրթության ոլորտի գիտելիքները և գործնական աշխատանքի փորձը:

Եթե համապատասխանում եք վերոնշյալ պայմաններին և ունեք ցանկություն՝ ընդգրկվելու խորհրդի կազմում, կարող եք առաջադրել Ձեր թեկնածությունը, որը կքննարկվի Այնթապի համայնքի ավագանու առաջիկա նիստում:

Ձեր թեկնածությունն առաջադրելու համար խնդրում ենք ներկայացնել կարճ ինքնակենսագրական և վերջին 2 տարիներին երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձի վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն: Պահանջվող տեղեկատվությունը կարող եք ուղարկել ayntap.ararat@mta.gov.am էլեկտրոնային հասցեին կամ ներկայացնել Այնթապի համայնքապետարան:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 098-53-32-39 հեռախոսահամարով:

Մրցույթը կկայանա 2020 թվականի մարտի 24-ին, ժամը 17.00-ին՝ Այնթապի համայնքապետարանում:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2020 թվականի մարտի 20-ը:

Կից՝ հայտի ձևը:

Հարգանքով՝ Այնթապի համայնաքապետարանի աշխատակազմ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին առընթեր

երիտասարդական խորհրդի կազմի հայտաձև

<u>Կոնտակտային տվյալներ</u>

Անուն Ազգանուն

_____

Հեռախոսահամար

_____

Տարիքը

_____

Էլեկտրոնային հասցե

_____

(խնդրում ենք նշել գործածելի էլ. հասցե)

Համայնք

_____

Բարձրագույն կրթություն (եթե առկա է)

_____

Դիմորդի մասին այլ տվյալներ

Խնդրում ենք նշել, թե որ սոցիալական կայքերում ունեք անձնական էջ:

(կարող եք նշել մի քանիսը)

- ☐ Facebook
- ☐ Instagram
- ☐ VKontakte
- ☐ Pinterest
- ☐ LinkedIn
- ☐ Twitter
- ☐ Telegram
- ☐ Այլ: _____

Կամավորական աշխատանք (եթե առկա է)

_____
_____
_____

_____
_____

Փորձ նմանատիպ կազմակերպություններում (եթե առկա է)

_____
_____
_____
_____
_____

Ի՞նչ խնդիրներ են առկա Ձեր համայնքում կապված երիտասարդության ակտիվության հետ:

_____
_____
_____
_____
_____
_____

Ի՞նչ լուծումներ կարող եք առաջարկել:

_____
_____
_____
_____
_____
_____

Ինչու՞ հենց Դուք պետք է ներկայացնեք Ձեր համայնքը:

_____
_____
_____
_____
_____
_____

Ի՞նչ այլ հմտություններ ունեք, որոնք կարող են օգտակար լինել պրոցեսին (օրինակ՝ գրաֆիկ դիզայն, լուսանկարչություն և այլ):

_____
_____
_____
_____
_____